

ՍՈՆԿ ՀԱՎԱՔՈՂՆԵՐԸ

Արմենը, Կարենը և Արտակը, վերադառնալով անտառից, որոշեցին նստել և մի փոքր հանգստանալ: Այդ ընթացքում նրանք, ըստ ձևավորված ավանդույթի, սկսեցին բաժանել իրենց հավաքած սնկերը: Սկզբում Արմենը ընկերներին տվեց այնքան սունկ, որքան նրանք արդեն ունեին: Հետո Կարենը Արմենին և Արտակին տվեց այնքան սունկ, որքան նրանց մոտ կար տվյալ պահին: Որպեսզի ընկերներից հետ չմնար, Արտակը նրանց տվեց այնքան սունկ, որքան նրանք ունեին տվյալ պահին: Եվ այդ պահին ընկերները զարմանալիորեն պարզեցին, որ բոլորն էլ ունեն հավասար քանակությամբ սունկ: Հայտնի է, որ միասին նրանք հավաքել էին n սունկ:

Պահանջվում է որոշել, թե քանի սունկ ուներ նրանցից յուրաքանչյուրը մինչ այս բաժանումը:

Մուտքային տվյալներ

Մուտքում տրված է բնական թիվը (≤ 30000):

Ելքային տվյալներ

Ելքում պետք է արտածել բացատներով անջատված երեք թիվ՝ համապատասխանաբար Արմենի, Արտակի և Կարենի հավաքած սնկերի քանակները:

Օրինակներ

N°	Stdin	Stdout
1	120	65 20 35
2	240	130 40 70